

ОХРАНА ОКРУЖАЮЩЕЙ СРЕДЫ

Պոլիէթիլէնային տոպրակների կիրառման կառավարման արտերկրյա փորձը և դրա տեղայնացման հնարավորությունները ՀՀ-ում

Աղաջանյան Գագիկ Ս.

տ.գ.թ., դոցենտ, Երզնկա միջավայրի և կայուն զարգացման ամբիոն, Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան (Երևան, ՀՀ)

<https://orcid.org/0000-0001-6870-597X>

gagikaghajanyan84@gmail.com

Աղաջանյան Սուսաննա Ս.

տ.գ.թ., Միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի պլագ դասախոս, Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան (Երևան, ՀՀ)

<https://orcid.org/0000-0002-5469-3995>

susy_agadjanyan@yahoo.com

ՀՏԳ՝ 502/504; EDN: RIDCUL; JEL: F64, K32, O13, P2

DOI: 10.58587/18292437-2025.1-145

Հանգուցաբառեր և բառակապակցություններ՝ պոլիէթիլէնային տոպրակներ, թափոն, աղտոտում, վերամշակում, այլընտրանք

Зарубежный опыт управления использованием полиэтиленовых пакетов и возможности его локализации в Республике Армения

Աղաջանյան Գագիկ Ս.

к.э.н., доцент кафедры Окружающей среды и устойчивого развития Армянский государственный экономический университет (Ереван, РА)

Աղաջանյան Սուսաննա Ս.

к.э.н., старший преподаватель кафедры международных экономических отношений, Армянский государственный экономический университет (Ереван, РА)

Аннотация. Широкое использование одноразового пластика и неправильное обращение с ними загрязняют воду и почву во всем мире. Плохо управляемые и необработанные пластиковые отходы попадают на свалки, сжигаются на открытых площадках, вызывая ряд опасностей для окружающей среды и здоровья. Управление твердыми отходами в Армении, главным образом, фокусируется на сборе, транспортировке и утилизации, а не на процессах переработки, предотвращения и сокращения. Управление использованием полиэтиленовых пакетов является глобальной экологической проблемой, в то время как существующие правовые и политические рамки в РА не способствуют сокращению использования пластиковых пакетов. Между тем, зарубежный опыт накопил множество подходов к сдерживанию такого роста спроса на полиэтиленовые пакеты и продвижению принципов циркулярной экономики «сокращение-повторное использование-переработка», к переходу к устойчивым моделям потребления и производства.

Ключевые слова и словосочетания: полиэтиленовые пакеты, отходы, загрязнение, переработка, альтернатива

International experience in managing the use of plastic bags and the possibilities of its localization in the Republic of Armenia

Aghajanyan Gagik S.

Ph.D. in Economics Associate professor at the Chair of Environment and sustainable development, Armenian State University of Economics (Yerevan, RA)

Aghajanyan Susanna S.

Ph.D., Senior Lecturer at the Department of International Economic Relations, Armenian State University of Economics (Yerevan, RA)

Abstract. The widespread use of single-use plastic and its improper handling pollute water and soil worldwide. Poorly managed and untreated plastic waste ends up in landfills, burned in open areas, causing a number of environmental and health hazards. Solid waste management in Armenia mainly focuses on collection, transportation and disposal, rather than on recycling, prevention and reduction processes. The management of the use of plastic bags is a global environmental problem, while the existing legal and policy framework in the RA do not contribute to reducing the use of plastic bags. Meanwhile, foreign experience has accumulated many approaches to curb such an increase in demand

Մեկանգամյա օգտագործման պլաստիկին են դասվում պլաստիկ փաթեթավորման համար նախատեսված նյութերը և մեկանգամյա օգտագործման համար նախատեսված իրերը: Դրանք ներառում են պոլիէթիլենային մթերային տոպրակները, սննդի և խոհանոցային մեկանգամյա փաթեթավորումը, ջրի շշերը և այլն: ԵՄ «Մեկանգամյա պլաստիկի օգտագործման հրահանգը» այս ցանկում ներառում է նաև պլաստիկի հետևյալ տարատեսակները՝ բամբակյա ձողիկներ, դանակներ, ափսեներ, ծղոտներ և խառնիչներ, փուչիկներ և ձողիկներ փուչիկների համար, սննդի տարաներ, բաժակներ խմիչքների համար, ըմպելիքների տարաներ, ծխախոտի մնացորդներ, պլաստիկ տոպրակներ, փաթեթներ և փաթաթաներ, թաց անձեռոցիկներ և սանիտարական պարագաներ [2]:

Բազմակի օգտագործման պլաստիկն ունի երկարաժամկետ կիրառություն և ներառում է խողովակներ, փականներ, կենցաղային իրեր և այլն: «Պլաստիկ» նշանակում է պոլիմեր, որին կարող են ավելացվել հավելումներ կամ այլ նյութեր, և որոնք կարող են գործածվել որպես մեկանգամյա օգտագործման տոպրակների հիմնական կառուցվածքային բաղադրիչ [5]:

Պոլիէթիլենային տոպրակները սահմանվում են որպես փոխադրման տոպրակներ բռնակով կամ առանց բռնակի, որոնք տրամադրվում են սպառողին վաճառակետերում: Պոլիէթիլենային տոպրակներն, իրենց հերթին, լինում են.

- թեթև տոպրակներ, որոնց հաստությունը 50 միկրոն է,
- գերթեթև տոպրակներ, որոնց հաստությունը 15 միկրոնից ցածր է և օգտագործվում են հիգիենայի կամ առաջնային փաթեթավորման նպատակով [4]:

Հարկ է նաև սահմանել «կենսաքայքայվող պլաստիկը»՝ որպես «պլաստմաս, որը կարող է ենթարկվել ֆիզիկական, կենսաբանական տարրալուծման, այնպիսին, որն, ի վերջո, քայքայվում է ածխածնի երկօքսիդի (CO₂), կենսազանգվածի և ջրի, և վերականգնվում կոմպոստացման միջոցով [3]:

Պոլիէթիլենային տոպրակները դարձել են կենցաղի ամենօրյա մասը: Քաղաքային կոշտ թափոնների շարքը համարել են մեծաթիվ պոլիէթիլենային տոպրակները՝ դառնալով սպառնալիք հանրային առողջության և շրջակա միջավայրի համար: Տարեկան աշխարհում օգտագործվում է մոտավորապես 500 միլիարդ պոլիէթիլենային տոպրակ: Ամեն րոպե օգտագործվում է ավելի քան մեկ միլիոն պայուսակ: Պոլիէթիլենային տոպրակի միջին «աշխատանքային կյանքը» 15 րոպե է, մինչդեռ դրա քայքայման համար երկար տարիներ են պահանջվում: Բացի դրանից, երբ պոլիէթիլենային տոպրակները ոչնչացվում են արևի լույսից, թունավոր նյութեր, ինչպիսիք են CO₂, մեթանը և էթիլենը արտանետվում են հողի մեջ, իսկ եթե պոլիէթիլենային տոպրակները այրվում են, ապա թունավոր նյութերն առաջանում են օդում՝ էլ ավելի մեծացնելով շրջակա միջավայրի օդի աղտոտման մակարդակը՝ արտանետելով վնասակար գազեր, ներառյալ ածխաթթու գազ, դիօքսիններ, ֆուրաններ, սնդիկ և պոլիքլորացված բիֆենիլներ [6]:

Պոլիէթիլենային տոպրակների աղտոտումը մեղմելու համար տարբեր երկրներ իրականացնում են համապատասխան քաղաքականություն երկու հիմնական ուղղություններով՝ կիրառման արգելք և հարկերի գանձում: Սրան զուգահեռ շրջանառության մեջ ներդրվում են նաև այլընտրանքներ, ինչպիսիք են, թղթե տոպրակները, ջուրե տոպրակները և այլ կենսաքայքայվող պարկերը: Թղթե տոպրակները կարող են վերամշակվել մինչև վեց անգամ: Ջուրի պայուսակներն էկոլոգիապես ավելի մաքուր են, քանի որ դրանք պատրաստված են կենսաքայքայվող նյութերից, հիմնականում՝ ցելյուլոզից:

Պլաստիկ տոպրակները Եվրոպայի ամենաշատ աղբարկված ապրանքների տասնյակում են: ԵՄ Պլաստիկ տոպրակների դիրեկտիվը (դիրեկտիվ (ԵՄ) 2015/720) «Փաթեթավորման և փաթեթավորման թափոնների» և դրա փոփոխությունն (94/62/EC) ընդունվել են թեթև պլաստիկ տոպրակների անկայուն սպառման և օգտագործման դեմ պայքարելու համար (այսինքն՝ 50 մկմ-ից ցածր հաստությամբ պլաստիկ պայուսակներ):

Հրահանգը անդամ պետություններից պահանջում է սահմանել կրճատման ազգային թիրախները և/կամ կիրառել տնտեսական գործիքներ (օրինակ՝ վճարները, հարկերը) և շուկայավարման սահմանափակումներ (արգելքները), պայմանով, որ վերջիններս լինեն համաչափ և ոչ խտրական: Անդամ պետությունների կողմից ձեռնարկված միջոցները ներառում են հետևյալներից մեկը կամ երկուսը.

- միջոցների ընդունում, որոնք երաշխավորում են, որ մեկ շնչի հաշվով տարեկան սպառման մակարդակը չի գերազանցի 90 պոլիէթիլենային տոպրակը մինչև 2019 թվականի դեկտեմբերի 31-ը, իսկ մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ը մեկ շնչի հաշվով 40 պոլիէթիլենային տոպրակը.

- միջոցների ընդունում, որոնք երաշխավորում են, որ մինչև 2018 թվականի դեկտեմբերի 31-ը, թեթև պոլիէթիլենային տոպրակները ապրանքների կամ ապրանքների վաճառքի կետում անվճար չտրամադրվեն, եթե նույնքան արդյունավետ գործիքներ չեն կիրառվել [1]:

Շատ թեթև պոլիէթիլենային տոպրակները (15 միկրոնից ցածր հաստությամբ, որոնք պահանջվում են հիգիենայի նպատակներով կամ տրամադրվում են սննդի առաջնային փաթեթավորման համար), կարող են բացառվել այս նպատակներից, սակայն ԵՄ անդամ պետությունները պետք է զեկուցեն դրանց սպառման մասին: ԵՄ Հրահանգին հետևելու համար անդամ երկրները կարող էին ընտրել վերոգրյալ մոտեցումներից մեկը: Ըստ այդմ, Ավստրիան, Բելգիան, Դանիան, Ֆրանսիան, Հունգարիան, Իտալիան, Մալթան, Ռումինիան և Իսպանիան նախընտրել են կիրառել արգելքներ, Խորվաթիան և Գերմանիան արգելքներ սկսել են կիրառել 2022 թ.-ից, իսկ մյուս անդամ երկրները նախապատվությունը տվել են տնտեսական միջոցների կիրառմանը: Այսպես, Ավստրիան, Բելգիան և Իտալիան բոլորն էլ ներառում են ≥ 50 միկրոն սահմանաչափը իրենց արգելքներում՝ բացառություններով ≥ 50 միկրոն պարկերի որոշ տեսակների համար: Այսպես, Ավստրիան չի ներառում տոպրակներ որոշ տեսակները, որոնք, կրկնակի օգտագործելի են, բազմակի օգտագործման խիստ չափանիշներով, մասնավորապես այդ տոպրակները պետք է պատրաստված լինեն պլաստմասսե գործվածքից (այսինքն՝ հյուսված պլաստմասսայից) և ունենան կարված բռնակներ:

Պլաստիկ տոպրակների արտադրության և ներմուծման փուլերին ուղղված տնտեսական գործիքներ են կիրառում ԵՄ 6 երկրներ: Այսպես, Հունգարիան ունի բնապահպանական արտադրանքի վճար, որը համակցված է EPR լիցենզիայի վճարի և բնապահպանական հարկի հետ, մինչդեռ Խորվաթիան, Դանիան, Լատվիան, Սլովենիան և Շվեդիան սահմանել են հարկեր: Շվեդիան ունի ավելի ցածր հարկի դրույքաչափ այն պլաստիկ տոպրակների համար, որոնք օգտագործվում են որպես առաջնային փաթեթավորում: Սլովենիան հատուկ հարկում է ≥ 50 միկրոն տոպրակների արտադրողներին/ներմուծողներին՝ ի հավելումն PCB-ների սպառողական վճարի [4]:

Խորվաթիան 1 կգ թեթև պլաստիկ տոպրակների համար սահմանել է 0.20 եվրո դրույքաչափ, որտեղ 1 շնչի հաշվով սպառման ծավալը կազմում է 53 թեթև պլաստիկ տոպրակ: Հունգարիայի համապատասխան վճարը կազմում է €2.50/կգ համար, իսկ մեկ շնչի հաշվով սպառումը 110 մ-ՊՏ-է, իսկ Լատվիայում

€4.80/կգ դիմաց վճարի պայմաններում մեկ շնչի հաշվով սպառումը կազմում է 327 [4]:

ԵՄ անդամ երկրները առաջիկայում նախատեսում են արգելել 15<50 միկրոն չափով մ-ՊՏ կիրառումը, բացառությամբ այն տեսակների, որոնք արտադրվում են կենսաքայքայվող պլաստիկից: Այսպես, Կիպրոսը նախատեսում է արգելել մ-ՊՏ-ները և բոլոր օքսո-կենսաքայքայվող ՊՏ օգտագործումը՝ բացի Գմ-ՊՏ և կենսաքայքայվող մ-ՊՏ-ներից: Լատվիայում 2025 թվականից մանրածախ առևտրով զբաղվողները պետք է փոխարինեն 15<50 մկմ ծավալով PCB-ները թղթից և սովաբաթղթից կամ այլ բնական մանրաթելից և կենսապլաստիկ հումքից պատրաստված տոպրակներով:

Հունգարիայում 2021 թվականի հուլիսից արգելվել են 15 < 50 միկրոն հաստությամբ բոլոր պլաստիկ տոպրակները, բացառությամբ նրանց, որոնք արտադրվում են կենսաքայքայվող պլաստիկից:

Այս դրույթներից կարելի է եզրակացնել, որ բազմակի օգտագործման պլաստիկ տոպրակները 50 միկրոնից ավելի հաստ են, բայց այս պարագայում ևս պետք է միջոցներ ձեռնարկել դրանց սպառումը նվազեցնելու համար, բայց սկզբունքորեն նրանք չեն կարող արգելել դրանք: Սահմանված չեն նաև չափորոշիչներ, որոնց «Բազմակի օգտագործման» պայուսակները պետք է համապատասխանեն: Բազմակի օգտագործման չափորոշիչը չի կարող լինել միայն հաստությունը: Այսպես, Նորվեգիայում մ-ՊՏ հիմնականում 32-37 միկրոն են, բայց դրանք ենթակա են բազմակի օգտագործման:

Չինաստանում ևս 2008 թ.-ից գործում է համազգային արգելք 0,025 միկրոն հաստությամբ պոլիէթիլենային տոպրակների արտադրության, վաճառքի և օգտագործման համար: Բոլոր սուպերմարկետներում, առևտրի կենտրոններում, առևտրի շուկաներում և մանրածախ առևտրի այլ կետերում պլաստիկ տոպրակները չեն կարող անվճար տրամադրվել:

Ընդհանուր առմամբ, պլաստիկ փաթեթավորման թափոնների կառավարման համար տարբեր երկրներ կիրառում են տնտեսական և հարկաբյուջետային բազմաթիվ միջոցառումներ.

- մեկանգամյա օգտագործման պլաստիկի վճարներ:

- Հարկային խթաններ ներդրումների համար (պլաստիկի վերամշակման գործընթաց, վերամշակված արտադրանքի արտադրություն): Վերամշակմամբ զբաղվող ընկերություններն իրավունք ունեն ԱԱՀ-ի վերադարձի, հարկային արտոնությունների կամ այլ սուբսիդիաների կառավարության կողմից:

- «Կանաչ» պետական գնումներ (պետական իշխանությունները ձգտում են ձեռք բերել ապրանքներ, ծառայություններ և աշխատանք-

ներ շրջակա միջավայրի վրա նվազագույն ազդեցությամբ):

- Չվերամշակվող պլաստմասայի հարկեր (չվերամշակվող պլաստիկ փաթեթավորման համար հավելյալ հարկի գանձում՝ ըստ նյութի, շրջակա միջավայրի վրա ազդեցության, քաշի, ծավալի կամ արժեքի):

- Կենսաքայքայվող պլաստիկի օգտագործման համար հարկային նվազեցումների կիրառում:

- Արտադրողի ընդլայնված պատասխանատվություն (արտադրողներն ունեն ընդլայնված պատասխանատվություն հետսպառողական փուլում պլաստիկի վերամշակման, վերաօգտագործման և հեռացման համար):

- «Վճարիք նետելիս» վճար, որը նախատեսում է, որ վճարները գանձվում են անհատներից, տնային տնտեսություններից և համայնքներից՝ հիմնված առաջացած թափոնների քանակի վրա:

- Հարկային արտոնություններ բազմակի օգտագործման և վերամշակված պլաստիկի օգտագործման համար (ձեռնարկությունները, որոնք օգտագործում են բազմակի օգտագործման և/կամ վերամշակված պլաստիկ, սահմանված պայմաններով կարող են օգտվել հարկային արտոնություններից) [1]:

ՀՀ-ում պինդ թափոնների կառավարումը հիմնականում կենտրոնանում է հավաքման, փոխադրման և հեռացման, և ավելի քիչ՝ «վերամշակման, կանխարգելման և նվազեցման գործընթացների վրա: Աղբյուրում թափոնների տարանջատումը չի խթանվում, և հավաքման/հեռացման վճարները չափազանց ցածր են՝ համեմատած թափոնների կառավարման գործընթացների իրական ծախսերի հետ:

Նույնիսկ նոր ներդրված վճարների կառուցվածքով, թափոնների կառավարման փաստացի ծախսերի և հավաքագրված եկամուտների միջև մնում է մեծ շեղում: Կոշտ թափոնների կառավարման ոչ համարժեք համակարգերն ամբողջ աշխարհում, այդ թվում ՀՀ-ում, հանգեցնում են աղտոտվածության աճի և թափոնների ոչ անվտանգ հեռացման:

2022 թ. ուժի մեջ մտավ առևտրի օբյեկտներում, առևտրի իրականացման վայրերում, շրջիկ առևտրի կետերի միջոցով, շրջածախ առևտրի միջոցով, ինչպես նաև բացօթյա առևտրի իրականացման դեպքում մանրածախ առևտուր իրականացնելիս ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 3923 ապրանքային դիրքում գտնվող (բացառությամբ 3923 29 900 0 ծածկագրին դասվող)՝ թաղանթի մինչև 50 միկրոն հաստությամբ պոլիէթիլենային պարկերի և տոպրակների (բացառությամբ կշռափաթեթավորման համար օգտագործվող պարկերի և երկրորդային հումքից արտադրված պարկերի և տոպրակների) վաճառքը (իրացնելը) արգելվում է» [8]:

Փորձենք հասկանալ, թե որքանով է վերոգրյալ օրենքի ընդունումը փոխել ՀՀ-ում այդ դասակարգչի տակ արտադրվող և ներմուծվող պոլիէթիլենային պարկերի և տոպրակների


Կիրառելով արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի (ԱՏԳ ԱԱ-2017) և տնտեսական գործունեության տեսակների դասակարգչի (ՏԳՏԴ խմբ.2) 4-րդ նիշ մակարդակների միջև անցումային բանալիները՝ կատարել ենք 3923 ապրանքային դիրքում գտնվող պոլիէթիլենային պարկերի և տոպրակների արտադրության ծավալների վերլուծություն:

Աղյուսակ 1. Ռետիին և պոլիմերային որոշ արտադրատեսակների արտադրության ծավալները 2021-2023 թթ. ընթացքում (տոննա) [7]

Արդյունաբերական արտադրանքը	Փաստացի թողարկումը				
	2023 թ.	2022 թ.	2021 թ.	2022 թ. 2021 թ-ի նկատմամբ, %	2023 թ. 2022 թ-ի նկատմամբ, %
Պոլիէթիլենի պարկեր և պայուսակներ (ներառյալ կոնաձև պարկերը և պայուսակները)	5,057.9	4,976.6	4,826.7	103.1	101.6
Պարկեր և պայուսակներ (ներառյալ կոնաձև պարկերը և պայուսակները) այլ պոլիմերներից, բացի պոլիէթիլենից	945.9	1,035.3	416.5	2.5 անգամ	91.4
Պոլիմերային տուփեր, արկղեր, զամբյուղներ և համանման արտադրատեսակներ	554.0	702.4	231.0	3.0 անգամ	78.9
Պոլիմերային շշեր, սրվակներ և համանման արտադրատեսակներ	32,286.8	74,625.3	40,475.1	184.4	43.3

Շրջակա միջավայրի ազդեցության տեսանկյունից կարևոր են ուսումնասիրվող ցուցանիշների բնեղեն ծավալները, որոնք հիմնականում 2023 թ. ընթացքում նվազել են: Ինչպես տեսնում ենք աղյուսակ 1-ից, 2022 թ. օրենքի կիրառումից հետո, այնուամենայնիվ շուրջ 3.1%-ով ավելացել է պոլիէթիլենային պարկերի և պայուսակների արտադրությունը <<-ում: Այսպես, եթե 2021 թ. արտադրվել է 4826.7

տոննա պարկեր և պայուսակներ, ապա 2023 թ. արտադրման ծավալը կազմել է 5057.9 տոննա: Այնուամենայնիվ, արժեքային արտահայտությամբ 2023 թ. ընթացքում նվազել է փաթեթավորման համար պլաստմասսե արտադրատեսակների արտադրությունը և 2022 թ. 9462.041 հազ. դրամի (ընթացիկ գներով) համեմատ կազմել է 8812.79 հազ. դրամ:



Գծապատկեր 1. 1.3923 ԱՏԳԱԱ պլաստմասսայից իրեր սպարանքների փաթեթավորման և տեղափոխման համար, 2017-2023 թթ., 2024 թ. հունվար-սեպտեմբեր, տոննա [7]

Ինչ վերաբերում է ներմուծմանը, ապա այս դեպքում ինչպես տեսնում ենք գծապատկերից ավելացել է այդ արտադրատեսակների ներմուծումը: Եթե 2021 թ. << ներմուծվել է ընդամենը 8226.7 տոննա պլաստմասսայից իրեր սպարանքների փաթեթավորման և տեղափոխման համար, ապա հետագա տարիներին այդ ցուցանիշը աճել է:

Այնուամենայնիվ, շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման տեսանկյունից չկա հատակ վիճակագրություն, թե որքանով են կրճատվել պոլիէթիլենային տոպրակներից առաջացող թափոնները: Բայց պետք է փաստել, որ դրանց փոխարինելու են եկել 50 միկրոն հաստությամբ պոլիէթիլենային տոպրակներն ու պարկերը, որոնք չեն վերամշակվում և աղբավայրերում բարակ պոլիէթիլենի փոխարեն հայտնվում են հաստ տարբերակները, որոնց կենսաքայքայման համար ավելի մեծ ժամանակաշրջան է պահանջվում: Սա նշանակում է, որ <<-ում պլաստիկ թափոնների խնդիրն լուծում տալ գոյություն ունեցող իրավական և քաղաքականության շրջանակներից գրեթե անհնար է, քանի որ նախևառաջ պլաստիկ թափոնները ճանաչվում և մշակվում են որպես սովորական թափոնների բազմաթիվ տեսակներից մեկը:

Որպես այդպիսին, տեղական ինքնակառավարման մարմինները պարտավոր են հոգալ խնդիրը, մինչդեռ նրանց բյուջեի և տեխնիկական կարողությունների սահմանափակումները ավելի են խորացնում խնդիրը:

<արկ է նշել, որ ինչքան էլ պետական կառավարման համապատասխան մարմինները խիստ վերահսկողություն իրականացնեն պոլիէթիլենային տոպրակների շրջանառության նկատմամբ, նրանց ֆինանսական և տեխնիկական կարողությունները սահմանափակ են: Մինևույն ժամանակ, եթե դրանց հոսքերը որոշակիորեն կարելի է կառավարել խոշոր առևտրի կենտրոններում և զարգացած խանութների տարածքում, ապա << փոքր քաղաքներում, մեծածախ շուկաներում դժվար է իրականացնել համապատասխան վերահսկողություն:

Անցումը դեպի շրջանաձև տնտեսություն պահանջում է բազմաչափ մոտեցումներ՝ քաղաքական միջամտություններից և իրավական դաշտի բարեփոխումներից մինչև տեխնոլոգիական առաջընթաց, նորարարություններ և շուկայական ուժերի վերակողմնորոշում: Տնտեսական կամ հարկաբյուջետային խթաններն օգտագործվում են ամբողջ աշխարհում՝ խրախուսելու ավելի քիչ թափոնների արտադրու-

թյունը և պատժելու ավելի շատ վատնող վարքագիծը վերին, միջին և ներքևի մակարդակներում: Տնտեսական միջոցառումները տրամադրում են հիմնական տնտեսական և կարգավորող ուղեցույց՝ որոշակի փաթեթավորման նյութերի և/կամ ապրանքային խմբերի պահանջարկի և առաջարկի վրա ազդելու համար:

Ուսումնասիրությունը ցույց տվեց, որ տարբեր երկրներում կիրառվում են տարբեր միջոցառումներ: Սակայն որպեսզի գործընթացներն ապահովեն առավելագույն արդյունավետություն կարևոր է հաշվի առնել հետևյալ դրույթները.

- իրականացնել գործընթացների մանրակրկիտ պլանավորում և ապահովել ներգրավվածություն/խորհրդակցություններ բոլոր շահագրգիռ կողմերի հետ մատակարարման ամբողջ շղթայում:

- Ստեղծել հավասար պայմաններ, սահմանել անցումային շրջան շահագրգիռ կողմերը պատրաստվելու հնարավորություն տալու համար:

- Յուրաքանչյուր միջոցառման համար անհրաժեշտ է հստակ քաղաքականություն և ուղեցույցներ:

- Փաթեթավորման այլընտրանքային լուծումները պետք է մատչելի լինեն:

- Ներդրումները պետք է ուղղվեն տարանջատման, տեսակավորման և վերամշակման համակարգերի ձևավորմանն ու զարգացմանը:

- Հետևողական շփումը շահագրգիռ շահագրգիռ կողմերի հետ պետք է պահպանվի՝ ապահովելու համար նրանց շահագրգռվածությունը և համագործակցությունը:

- Պետ է մշակել մոնիտորինգի և հաշվետվողականության համակարգ:

Ի վերջո, ոչ մի միջոց չպետք է կամ չի կարող իրականացվել՝ մեկուսացված այլ միջոցառումներից, ինչը կարող է առաջացնել անհամապատասխանության սողանք: Որոշ դեպքերում իրախուսման միջոցները պետք է իրականացվեն միաժամանակ:

Օգտագործված գրականության ցանկ

1. Directive (EU) 2015/720 of the European Parliament and of the Council of 29 April 2015 amending Directive 94/62/EC as regards reducing the consumption of lightweight plastic carrier bags (Text with EEA relevance) <https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/?qid=1601561123103&uri=CELEX:32015L0720>
2. Directive (EU) 2019/904 of the European Parliament and of the Council of 5 June 2019 on the reduction of the impact of certain plastic products on the environment (Text with EEA relevance) <https://eur-lex.europa.eu/eli/dir/2019/904/oj>
3. DIRECTIVE (EU) 2019/904 OF THE EUROPEAN PARLIAMENT AND OF THE COUNCIL of 5 June 2019 on the reduction of the impact of certain plastic products on the environment.
4. European Commission, Directorate-General for Environment, Sherrington, C., Watson, S., Marsh, P., et al., *Scoping study to assess the feasibility of further EU measures on waste prevention and implementation of the Plastic Bags Directive . Part II, Implementation of Plastic Bags Directive*, Publications Office of the European Union, 2022, <https://data.europa.eu/doi/10.2779/30479>
5. Regulation (EC) No 1907/2006 of the European Parliament and of the Council of 18 December 2006 concerning the Registration, Evaluation, Authorisation and Restriction of Chemicals (REACH), establishing a European Chemicals Agency, amending Directive 1999/45/EC and repealing Council Regulation (EEC) No 793/93 and Commission Regulation (EC) No 1488/94 as well as Council Directive 76/769/EEC and Commission Directives 91/155/EEC, 93/67/EEC, 93/105/EC and 2000/21/EC (Text with EEA relevance)
6. Simmons, C. (2005). It's in the Bag: An Estimate of the Effect of CO2 Emissions of the Irish Plastic Bag Tax. *Website*. Accessed November, 22, 2005.
7. Արդյունաբերական կազմակերպություններում հիմնական արտադրատեսակների թողարկումը բնեղեն արտահայտությամբ» 2023, 2022թ. վիճակագրական տեղեկագրեր:
8. ՀՀ օրենքը Առևտրի և ծառայությունների մասին: <https://www.arlis.am/documentview.aspx?docid=198009>

Содана/Հանձնվել է՝ 21.12.2024

Рецензирована/Գրախոսվել է՝ 15.01.2025

Принята/Ընդունվել է՝ 22.01.2025